

Мы без конца ругаем товарища Сталина, и, разумеется, за дело. И все же я хочу спросить - кто написал четыре миллиона доносов?

Сергей Довлатов

## **Երկար, երկար մի ճանապարհ**

### **Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես**

Աշխատասենյակի պատուհանից երևում է տան ներքին փոքրիկ բակը, որն Արաքսին իսկական դրախտային այգի է դարձրել՝ իր վարդերով, յասամանենիներով ու սալորի հսկայական ծառով, որի ճյուղերը կախ են ընկել ու համարյա քսվում են Վանա լճի ջրերին:

Հա-հա, հենց Վանա լճի, թեև տունը Երևանում է, Բութանիա թաղամասում: Ու էդ տան դրախտային այգում նա իր ձեռքով փոքրիկ Վանա լիճ է սարքել՝ իր շրջակա բնությամբ, Միփանով – Նեմրոյթով-բանով: Ի՞նքն է սարքել: Կարո՞տը: Կարո՞տը: Որ, պարզվում է՝ նաև մե՛ծ շինարար է ու ընդունակ է «վերակառուցել» ոչ միայն Վարազա վանքը, որտեղ ինքն ուսանել է, ոչ միայն Շուշանց գյուղը՝ իր տներով ու փողոցներով, այլև մի ամբողջ լիճ՝ իր շրջակա լանդշաֆտով:

Ու ժամանակ առ ժամանակ, կտրվելով գրասեղանից և ընդհատելով «Սրտի խորքերից Աստուծո հետ» գրուցող Նարեկի «խոսքը» գրաբարից աշխարհաբար «թարգմանելու» ծանր ու հաճելի գործը ու չմարող ծխախոտի ծխից մրմռացող աչքերը կկոցելով՝ երազկոտ հայացքը հառում է լճակին ու քթի տակ մրմնջում է. «Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես...»...

### **Ախպեր, քեզ թվում է, որ դու կանգնած ես, ուրեմն նստած չե՞ս**

Գիշեր էր, երբ դուռը թակեցին: Թաղային միլիցիոներն էր՝ երկու անձանոթների հետ: Մի տեսակ՝ անհարմար էր զգում, որ պիտի իր թաղի հարգարժան մարդկանցից մեկին քաղմաս ուղեկցի: Բայց հասցեն ճիշտ էր, չէր շփոթել:

Մութ սրահում՝ իրար վրա թափված մարդիկ, ծուխ, ժխոր, հուսահատ դեմքեր, անորոշ սպասում: Հետո՝ առաջին երկտողը. «Արաքս ջան, սև գիշեր լուսացավ... Եվ դեռ քանի այդպիսի գիշերներ, ով գիտե... Մեզ հեռու, շատ հեռու ու ցուրտ տեղ են տանելու: Այդպես են խոսում: Տաք շորեր են հարկավոր: Գրողների միությունն արդյոք չի՞ ուզում և կամ չի՞ կարող դիմել՝ ուր հարկն է, և ազատել մեզ: Ես ի՞նչ կասկածելի տարր եմ որ...»:

Բայց «սիստեմը» շատ զգոն էր ու անհանդուրժող, ոչ միայն իր բացահայտ թշնամիների, այլև քողարկված, բարեկամի դիմակ հագած «յուրայինների» նկատմամբ: Այնքան զգոն, որ մինչև անգամ պատերազմ մղելով արտաքին թշնամու դեմ՝ չէր մոռանում «ներքին» թշնամիներին:

1941 թ. նոյեմբերի 28-ն էր:

## **Էտապ, արտոը**

«Յոթ օր ծովի վրա մնալուց հետո այսօր՝ ամսույս (դեկտեմբեր) 13-ի առավոտյան հասանք Կրասնովոդսկ: Այստեղից ուր և երբ կմեկնենք՝ չգիտեմ»:

«35 օր ճամփա գնալուց հետո հասանք Աքբասար՝ փոքրիկ մի քաղաք հյուսիսային Ղազախստանի Ակմոլինսկի մարզում, ուր մասնատվեց մեր 800 հոգանոց քարավանը և խումբ առ խումբ տարվեց շրջակա սովխոզներ ու կոլխոզներ: Առանձին-առանձին բաժանեցին տեղական բնակչության տների վրա: Գյուղակը բաղկացած է 40-45 տնից: Մեջընդմեջ ֆերմայի գոմերն են, ամեն մեկը՝ 150-200 անասունի համար: Յուրաքանչյուր գոմում աշխատում են 3-4 հոգի, որոնց մեծ մասը հայ տղաներ են: Աշխատանքը ծանր է: Ես՝ ուր, անասնապահությունը՝ ուր, մանկավարժությունից՝ անասնապահություն, դպրոցից՝ գոմ... ինչ արած:

Սաստիկ ցուրտ է այստեղ, ոչ մի կրկնակոշիկ ու վերարկու չի փրկում, ցուրտը հաճախ հասնում է 45 աստիճանի: Այս պատիժն ինչի՞ համար էր, ո՞ր հանցանքիս համար... բան չեմ հասկանում»:

### **Լայնարձակ կալանավայր**

Սկզբում դպրոցում սովորեցնում էին, որ «ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ է», ու դա մատուցվում էր որպես մեծ հայրենիքի պատմություն, բայց իրականում հենց այդ բանտի պատմությունն էր: Հետո սովորեցնում էին, որ «Լայնարձակ է հայրենի երկիրն իմ», ու մարդը ոչ մի տեղ այնքան ազատ չի շնչում, որքան այստեղ:

Բայց որքան էլ լայնարձակ՝ բանտը մնում է բանտ, որ չորս կողմից երկաթե վանդակաճաղերով ու փշալարերով ապահով պատնեշում էր դրսի «փտած-նեխած» աշխարհից: Ու նաև հարազատներից՝ ծնողներից, երեխաներից: Նաև՝ հենց ինքդ քեզից:

Ու երբ ինչպես անակնկալ աքսորվել էր, նույնքան անակնկալ էլ ազատ արձակվեց ու հայրենիք վերադարձավ, փորձեց, ի վերջո, ճշտել՝ ինչի՞ համար էր պատժվել: «Գոհ եղեք, որ վերադարձել եք, ու հարցեր մի տվեք», - եղել էր պաշտոնական պատասխանը: Մարդը ամենամեծ արժեքն էր, հոգում էին նրա մասին՝ որ գոհ լինի, ավելորդ հարցերով չձանրաբեռնի ուղեղը...

### **Կենսագրությունից ջնջված տարիներ**

Գրեթե չորս տարի: Հույսի ու հուսահատության երկարուձիգ տարիներ:

Քեզ հետ մեկտեղ գիշերն ի բուն ես կսպասեմ լուսաբացին:

Միրտըս ի դող, աչքս՝ անքուն, ես կսպասեմ լուսաբացին:

Պլպլում եմ ես էլ քեզ պես և սպառվում ինքս իմ հրով,

Վախենում եմ՝ լույսս մարի, ու չհասնեմ լուսաբացին:

Չգիտես ինչու՝ այս շրջանի՝ 1941 թ. քաղաքական հալածանքների մասին պատմության դասագրքերում, կարծես, չի հիշատակվում: Գուցե պատճառն այն է, որ դրանք այնքան էլ «զանգվածային» չեն եղել: Բայց հո եղե՛լ են, չե՞՞:

1990-ականներին արված հարցումները նույնպես ոչ մի պարզություն չմտցրին այն հարցում, թե այդ շրջանում ինչ մեղադրանքներով են արքայազնի մարդիկ: Ղազախստանի Ակմոլինսկի մարզից, օրինակ, պատասխանեցին, թե իրենց արխիվում նման գործեր չեն պահպանվել:

Այսպես, մեկ անգամ արդեն հայրենիք կորցրած, կոտորած ու գաղթի ճամփաներ տեսած պապիկիս կենսագրությունից ջնջվեցին, անհետացան կյանքի գրեթե չորս տարիները...

Հ.Գ.Նույն արքայազնություն եղած գրող Հուսիկ Խանդամուրը, որին հայրենիք վերադառնալուց հետո հանգրվան էին տվել Ծաղկաձորի գրողների հանգստյան տանը, մի անգամ, երբ երեխաները խուճապահար փախչում էին անտառի բացատից, որտեղ օձ էին տեսել, մեղմ ժպիտով ասել էր. «Մարդո՛ւց վախեցեք, օձերը վտանգավոր չեն»:

Սեդա Մեսրոպյան